**Արձանագրություն**

**Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագծի և *ՌԷԳ հաշվետվության հանրային երկրորդ լսում***

---

*Պատվիրատու* **Ապարնի համայնքապետարան**

*Կատարող* **«Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ**

**30.05.2025 թ.**

Քննարկմանը մասնակցում էին Քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչ Ն.Պետրոսյանը, նախագծի հեղինակային խումբ՝ Ա.Կարապետյանը և Շ. Պետրոսյանը, ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի մասնագետ Սուսաննա Անտոնյանը, եղիպատրուշ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մարզպետ Գրիգորյանը, համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի ներկայացուցիչ՝ Վահե Սուքիասյանը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր հողաշինարար՝ Անատոլ Դաղլարյանը, գլխավոր մասնագետ՝ Իշխան Հայրապետյանը, համայնքի բնակիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ բնակավայրի վարչական ղեկավարը՝ խոսքը փոխանցելով քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ՝ տիկին Ն.Պետրոսյանին, ով ներկայացրեց, որ համայնքի պատվիրակմամբ և քաղաքաշինության կոմիտեի համակարգմամբ ներկայումս մշակման ընթացքում են Միկրոռեգիոնալ փաստաթղթի շրջանակում մշակված և սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագծային աշխատանքները: Տվյալ փաստաթղթի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի N 1246-Ա որոշմամբ Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «Մայլեռ» ներդրումային ծրագրին հավանություն տալու փաստով՝ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում 2080 հեկտար ընդհանուր մակերեսով (ակտիվ օգտագործման մակերեսը՝ մոտ 500 հա) հողամասում իրականացնելու ներդրումային ծրագիր:

Կառավարության ծրագրով նախանշված սահմաններում մինչև տվյալ փոփոխությունների միասնական նախագծի մշակումն իրականացվել են մի շարք հատվածների նպատակային նշանակությունների փոփոխություններ, այնուհետև, հաշվի առնելով դրանց մեծաքանակ թիվը գլխավոր հատակագծի փոփոխությունն առաջարկվել է մշակել մեկ միասնական նախագծի շրջանակում: Ներկայացվեց, որ դիտարկվող փոփոխությունների տարածքը տեղակայված է բնակավայրից հարավ ընկած՝ նախկին գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա: Նախագիծը մշակվել է նախապես միջգերատեսչական հանձնաժողովում շրջանառված և համաձայնեցված առաջադրանքի հիման վրա, որն առնչվում է միայն Մայլեռ ծրագրի շրջանակում իրականացվող փոփոխություններին և որևէ մասով չի առնչվում բնակավայրի գլխավոր հատակագծով հաստատված մասին:

Այնուհետև խոսքը փոխանցվեց շրջակա միջավայրի փորձագետ Սուսաննա Անտոնյանին, որ հակիրճ ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցության նպատակները, օրենսդրությամբ սահմանված լսման անհրաժեշտությունը: Փորձագետը հավելեց, որ նախագիծը ներկայացվել է նաև այլ գերատեսչություններ, որոնցից ևս ստացվել են առաջարկություններ և որոնք ներկայացվել են նախագծողին:

Նախագծում փորձագետի կողմից առաջարկվեց ներկայացնել կոնկրետ կառուցապատումների վերաբերյալ տվյալներ՝ գնահատելու դրանց ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

Զեկուցողի կողմից պարզաբանվեց, որ տվյալ նախագծով նախատեսված գլխավոր հատակագծում փոփոխությունների շրջանակն ընդգրկում է ծրագիրն իրականացնող ընկերության կողմից ձեռք բերված հողատեսքերի՝ միանական փաթեթով փոփոխությունները, հաշվի առնելով այն փաստը, որ 2011 թ. 1920-Ն որոշմամբ սահմանված է բնակավայրի տարածքի 10 %-ը գերազանցող փոփոխությունները կատարել գլխավոր հատակագծում փոփոխությունների միջոցով: Այն պատճառով, որ հավանության արժանացած ներդրումային ծրագրի հիմնական դրույթները որոշակի են՝ լեռնադահուկային հանգստավարին ուղեկցող ենթակառուցվածքների տեսքով, այնուհանդերձ հաշվի առնելով դրանց տեղաբաշխման առանձնահատկություններով պայմանավորված հատակագծային կառուցվածքի վերջնամշակված տարբերակի բացակայությունը, հողատեսքերը նախատեսվել է փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառույթներ՝ հետագայում կոնկրետ հատակագծի մշակմանը զուգընթաց կատարելով 1920-Ն որոշմամբ մատնանշված գործառնական նշանակությունների փոփոխություններ՝ յուրաքանչյուր տարածքի առանձին առաջադրանքի շրջանակում պարզեցված կարգով:

Նախագծողի կողմից հավելվեց, որ նախագծման յուրաքանչյուր փուլում նախատեսված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համապատասխան գործընթացներ և կառուցապատողի կողմից նախագծի հայեցակարգային փուլում արդեն իսկ ստացվել է ՇՄԱԳ դրական եզրակացություն: Տվյալ փուլից հետո յուրաքանչյուր առանձին կառուցապատման հատվածը ևս ենթակա է այդ փորձաքննության:

Պարզաբանումներ տրվեցին հատակագծային սահմանափակումների և հեռանկարային նախանշումների հիման վրա տարածահատակագծային կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ՝ ապահովելու մարդու կենսագործունեության համար առավել հարմարավետ, առողջ, անարգել, անվտանգ ու գրավիչ միջավայր:

Համայնքի կողմից ներկայացվեց ծրագրի սոցիալական դրական ազդեցությունը բնակավայրերի բնակչության վրա՝ ինչպես ընթացիկ շինարարական

աշխատանքներում ներգրավվածության, այնպես է սպասարկման ոլորտում աշխատատեղերի շնորհիվ:

Հարցադրում ներկայացվեց պետական աջակցության շրջանակում իրականացված ճանապարհի որոշակի հատվածի կառուցման ընթացքում գոյություն ունեցող ոռոգման համակարգի վնասման վերաբերյալ՝ ճշտելով ներդնողի կողմից դրա վերականգնման վերաբերյալ նկատառումները: Ի պատասխան ներդնողի ներկայացուցչի կողմից տրվեց պարտավորություն՝ ոռոգման համակարգի ամբողջականության վերականգնման մասով:

Հարցադրում կատարվեց լեռնադահուկային առողջավայրի կառուցմամբ ձևավորվող կոյուղաջրերի հեռացման վերաբերյալ, ի պատասխան որի հնչեցվեց՝ որ ջրահեռացումը կատարվելու լոկալ մաքրման կայաններ և մաքրելուց հետո կատարվելու է ջրերի երկրորդային օգտագործում՝ տեխնիկական կարիքների համար:

Հանրային լսման ընթացքում այլ հարցեր չեն հնչել:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան

Նախաձեռող «Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Շ.Պետրոսյան